


ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզի համայնքներում 2019 թվականի ընթացքում աճուրդ վաճառքով օտարված հողամասերի վերաբերյալ

2019 թվականի ընթացքում Լոռու մարզի համայնքներում կայացել է թվով 448 աճուրդ, որոնց արդյունքում օտարվել է համայնքային սեփականության 101,87 հա հողամաս՝ նախորդ տարվա 32,3 հա-ի փոխարեն: 2019 թվականին օտարվել է 69,57 հա -ով կամ 3,15 անգամ ավելի հողամաս, քան 2018 թվականին: Հողամասերի օտարման արդյունքում ձևավորված եկամուտը կազմել է շուրջ 262 654 797 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 77 756 963 ՀՀ դրամի փոխարեն: 2019 թվականին ձևավորված եկամուտը կազմել է 184 897 833 ՀՀ դրամով կամ 3.38 անգամ ավելի, քան 2018 թվականին:


Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվում են հետևյալ կերպ

Գյուղատնտեսական	644048.7
Բնակավայրերի	164192.53
Արդյունաբերության, ընդերք. և այլ արտ. նշան.	196443.1
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմ ենթ.	13980.4
Հատուկ պահպանվող	0
Հատուկ նշանակության	0
Անտառային	0
Ջրային	0



Հողերի օտարման արդյունքում ձևավորված եկամուտը /ըստ նպատակային նշանակության/

Գյուղատնտեսական	81938458.1
Բնակավայրերի	145803989.1
Արդյունաբերության, ընդերք. և այլ արտ. նշան.	28568958.7
Էներգետիկայի, կապի, Տրանսպորտի, կոմ. Ենթակ.	6343391.64
Հատուկ պահպանվող	0
Հատուկ նշանակության	0
Անտառային	0
Ջրային	0



Հողամասի կադաստրային արժեքի 50-ից 100 % ով օտարվել է ընդամենը երկու միավոր հողամաս : Կայացած 446 աճուրդի դեպքում հողամասերն օտարվել են կադաստրային արժեքի 100% -ից ավելի գնով: Փաստացի օտարման միջին գինը կազմել է օտարված բոլոր հողամասերի կադաստրային արժեքով հաշվարկված գնի 139 % -ը: 2018 թվականին այդ թիվը

կազմել է հողամասերի կադաստրային արժեքով հաշվարկված գնի 117 %-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ հողամասերն օտարվել է 21 %-ով ավելի բարձր գնով:

Հատկանշական է, որ օտարված հողամասերի քանակով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից հետո մեծ տեղ են կազմում արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը, իսկ բնակավայրերի նպատակային նշանակության հողերից համայնքների բյուջե մուտքագրված եկամուտը կազմում է ամբողջ ձևավորված եկամտի կեսից ավելին՝ շուրջ 56 %:

Աճը պայմանավորված է նրանով, որ ձևավորվում է հողի շուկան, մեծանում է քաղաքացիների հետաքրքրվածությունը հողօգտագործման նկատմամբ: Աճուրդների հրապարակայնության ու թափանցիկության շնորհիվ հողի շուկան դառնում է առավել մրցակցային: Մարզպետարանի կողմից ցուցաբերած հսկողության ու հետևողականության շնորհիվ բացառվել են ձևական աճուրդների կազմակերպումը:

Մարզի համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության տրամադրման վերաբերյալ

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը **2019 թվականին կազմել են 204253.4հա**, որից **համայնքային սեփականության՝ 121849.5հա**, իսկ **պետական սեփականության՝ 82403.9 հա**:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը **2018 թվականին կազմել են 203955.6 հա**, որից **համայնքային սեփականության՝ 121562.1հա**, իսկ **պետական սեփականության՝ 82393.5 հա**:

Հ/Հ	ՀՀ մարզ	ԸՆԿԱՄԵՆԸ գյուղ նշանակ հողեր /համայնք + պետական/ /հա/	Համայնքային սեփականություն						Պետական սեփականություն						ԱՄԲՈՂՋԸ /փաստացի/									
			Ընդամենը համայնքային հա			Վարձակալության ներակա հա			Վարձակալության գանձումներ /հազ.դրամ/			Ընդամենը պետական հա			Վարձակալության ներակա հա			Վարձակալության գանձումներ /հազ.դրամ/			հա	%	գումարը /հազ.դրամ/	%
			Նախատ.	փաստ.	%	Նախատ.	փաստ.	%	Նախատ.	փաստ.	%	Նախատ.	փաստ.	%	Նախատ.	փաստ.	%	18	19	20	21			
1	2	3	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21					
	2019	204253.4	121849.5	67023.2	37386.6	56	133336.2	149477.0	112	82403.9	9073.9	4107.6	45	8813.1	9266.0	105	41494.2	54.5	158743.0	111.7				
	2018	203955.6	121562.1	65848.8	44285.3	67	136472.7	144470.8	106	82393.5	6066.9	4612.0	76	11724.3	12038.8	103	48897.3	68.0	156509.6	105.6				

2019թ. **համայնքային սեփականության** հողերից նախատեսվել է հանձնել վարձակալության 67023.2հա 133336.2հազ դրամ վարձավճարով, փաստացի տրվել է վարձակալության 37386.6հա և հավաքագրվել է 149477.0 հազ.դրամ վարձավճար:

2018թ. **համայնքային սեփականության** հողերից նախատեսվել է հանձնել վարձակալության 65848.8հա 136472.7հազ դրամ վարձավճարով, փաստացի տրվել է վարձակալության 44285.3հա և հավաքագրվել է 144470.8 հազ.դրամ վարձավճար:

2019թ. **պետական սեփականության** հողերից նախատեսվել է հանձնել վարձակալության 9073.9հա 8813.1հազ դրամ վարձավճարով, փաստացի տրվել է վարձակալության 4107.6հա և հավաքագրվել է 9266.0 հազ.դրամ վարձավճար:

2018թ. **պետական սեփականության** հողերից նախատեսվել է հանձնել վարձակալության 6066.9հա 11724.3հազ դրամ վարձավճարով, փաստացի տրվել է վարձակալության 4612.0հա և հավաքագրվել է 12038.8 հազ.դրամ վարձավճար:

2019թ. **փաստացի** ընդամենը հանձնվել է վարձակալության 41494.2 հա, որը կազմել է նախատեսվածի 54.5 %, հավաքագրվել է 158743.0հազ.դրամ որը կազմել է նախատեսվածի 111.7%-ը:

2018թ. **փաստացի** ընդամենը հանձնվել է վարձակալության 48897.3 հա, որը կազմել է նախատեսվածի 68 %, հավաքագրվել է 156509.6 հազ.դրամ որը կազմել է նախատեսվածի 105.6%-ը:

Հողամասերի տրամադրման և փաստացի հավաքագրման աճը պայմանավորված է հողամասերի օգտագործումը և վարձավճարների գանձումը ստվերից դուրս բերելու հետ:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ Է.Հախվերդյան